ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» հունիսի 2020 թվականի N **199**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 27 Բ ՀԱՍՑԵՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արսեն Հրանտի Բաղդասարյանի կողմից ներկայացված դիմումը, 21.11.2007թ. թիվ 2483860 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքնի գրանցման վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝ ***որոշում եմ***

1. Ք. Ստեփանավան Իսահակյան փողոց թիվ 27բ հասցեով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան Իսահակյան փողոց թիվ 39:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» հունիսի 2020 թվականի N 200

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-007-0015-0019 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻՑ 0.00344 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝ հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 27.04.2006 թվականի թիվ 570-Ն որոշումը, Ստեփանավան քաղաքային համայնքի 2013թ. հաստատված գլխավոր հատակագիծը, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը.

որոշում եմ

1. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:
2. Հողամասը ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
3. Ճանաչել 0.00344 հա բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ Ստեփանավան համայնքի սեփականության իրավունքը:
4. Հողամասի սահմանները որոշվում են «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

5. Վերը նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան Մ. Բաղրամյան փողոց թիվ 19/10-1:
6. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում նշված հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնելու համար:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» հունիսի 2020 թվականի N 201

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԻՎ 190 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նվեր Գառնիկի Դալլաքյանի կողմից ներկայացված դիմումը, 10.04.2000թ. թիվ 0221208 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝ ***որոշում եմ***

1. ք. Ստեփանավան Տերյան փողոց 2-րդ նրբանցք թիվ 4 հասցեով՝ բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին և բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան Տերյան փողոց 3-րդ փակուղի թիվ 4:
2. Ուժը կորցրած ճանաչել Ստեփանավան համայնքի ղեկավարի 09.06.2020թ. թիվ 190 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հունիսի 2020 թվականի N 202

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՑՈԼԱԿ ՍԱՎԹԱԼՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԱՔՍԻ ՍԱՎԹԱԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԵՐԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ցոլակ Սավթալյանի և Արաքսի Սավթալյանի հողերից հրաժարվելու մասին 19.06.2020թ. U-144 համատեղ դիմումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 100 և 101-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ***

1. Անվավեր ճանաչել անշարժ գույքի կադաստրի կողմից տրված 23.01.2020թ. թիվ 23012020-06-0056, 23012020-06-0055, 23012020-06-0047 անշաժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները:
2. 06-051-0152-0037 ծածկագրի 0.867հա հա խոտհարքը, 06-051-0108-0047 ծածկագրի 1.667 հա խոտհարքը և 06-051-0127-0009 ծածկագրի 0.279 հա խոտհարքը ճանաչել համայնքային սեփականություն:
3. Ներկայացնել անշարժ գույքի կադաստրի համայնքային սեփականության վկայականներ ստանալու համար:
4. Հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հունիսի 2020 թվականի N 203

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՎԻՐԱՀԱՅՈՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 80Ա ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ 2-ՐԴ ՀԱՐԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԹԻՎ 4, 45.6 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Աղասու Սարգսյանի կողմից ներկայացված դիմումը և 18.11.2010թ. N2485425 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝ ***որոշում եմ***

1. Ստեփանավան քաղաքի Վիրահայոց փողոց թիվ 80Ա բնակելի շենքի 2-րդ հարկում գտնվող՝ համատեղ սեփականություն հանդիսացող, 45.6 քմ մակերեսով բնակարանի նոր փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան Վիրահայոց փողոց թիվ 80/1 շենք թիվ 4 բնակարան:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» հունիսի 2020 թվականի N 204

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 20.05.2020Թ. ԹԻՎ 173 ԵՎ 09.06.2020Թ. ԹԻՎ 183 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՉԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԸ ՉԵՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պայմանավորված «ԿՈՐՈՆՈՎԻՐՈՒՍ (COVID-19)» համաճարակային իրավիճակով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 04.06.2020թ. թիվ 01/107.3.1/04920-2020 գրությունը՝ *որոշում եմ*

1. Չեղարկել Ստեփանավանի համայնքապետարանում համայնքային ծառայության թափուր պաշտոնների մասին հայտարարված մրցույթները
2. Ուժը կորցրած ճանաչել Ստեփանավան համայնքի ղեկավարի 20.05.2020թ. թիվ 173 և 09.06.2020թ. թիվ 183 որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» ՀՈՒՆԻՍԻ 2020 թվականի N **205**

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և առաջնորդվելով Ստեփանավան համայնքի ավագանու 2020 թվականի 26 հունիսի թիվ 26-Ն որոշմամբ ***որոշում եմ***

1. Սահմանել Ստեփանավան համայնքի 2020 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային համամասնությունները՝ համաձայն 1, 2 հավելվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հունիսի 2020 թվականի N **206**

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ ՆԱՐԵ ԳՈՌԻ ՍԱՐԴԱՐՅԱՆԻՆ ԵՎ ԴԱՆԻԵԼ ԳՈՌԻ ՍԱՐԴԱՐՅԱՆԻՆ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լիլիթ Արմենի Ղարաջյանը և Գոռ Աշոտի Սարդարյանը փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ են եղել սկսած 2016 թվականից: Համատեղ ամուսնության ընթացքում ունեցել են երկու երեխա՝ Նարե Գոռի Սարդարյան՝ ծնված 28.06.2016թ. և Դանիել Գոռի Սարդարյան՝ ծնված 27.06.2018թ.: Գոռ Սարդարյանը երեխաների նկատմամբ ճանաչել է հայրություն: Ներկայումս Գոռ Սարդարյանը մեկնել է Ռուսաստանի Դաշնություն արտագնա աշխատանքի:

Լիլիթ Ղարաջյանը չի զբաղվում իր երեխաների խնամքով և դաստիարակությամբ, շատ հաճախ անչափահաս երեխաներին թողնելով միայնակ, անհասցե գնում է և վերադառնում ուշ ժամերին, երեխաները հաճախակի լինում են քաղցած և անխնամ:

11.06.2020թ. կատարված տունայցի արդյունքում պարզվեց, որ տունը զուրկ է կոմունալ-կենցաղային, սանիտարահիգիենիկ բոլոր պայմաններից:Նման պայմաններում բնակվելը վտանգ է սպառնում մանկահասակ երեխաների կյանքին և առողջությանը:

Հիմք ընդունելով ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Ստեփանավանի բաժնի 04.06.2020թ. թիվ 61/9-2807 և ՀՀ Լուու մարզպետի 09.06.2020թ.թիվ 01/115.3/05158-2020 գրությունը, Ստեփանավանի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 12.06.2020թ. եզրակացությունըև ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգիքի 43-րդ հոդվածը, «Երեխաների իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածը, «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 02.06.2016թ. թիվ 631-Ն որոշման 8-րդ հոդվածի 3-րդ կետը, 9-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերը ***որոշում եմ***

1. Անչափահասներ Նարե Գոռի Սարդարյանին՝ ծնված 28.06.2016թ. և Դանիել Գոռի Սարդարյանին՝ ծնված 27.06.2018թ. ճանաչել առանց ծնողական խնամքի մնացած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հունիսի 2020 թվականի N **207**

ԱՆՉԱՓԱՀԱՍ ՋՈՅԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անչափահաս Ջոյա Պողոսյանը ծնված՝ 13.10.2008թ. երկկողմանի ծնողազուրկ է: Երեխայի խնամքով և դաստեարակությամբ զբաղվում է եղբայրը՝ Արմեն Պողոսյանը ծնված՝ 18.02.1992թ.:

Ջոյա Պողոսյանի մայրը՝ Էմմա Պողոսյանը, որը ունեցել է միայնակ մոր կարգավիճակ մահացել է 10.12.2019թ. (մահվան վկայական- ԲԱ201791), իսկ երեխայի հայրը եղբոր՝ Արմեն Պողոսյանի հավաստմամբ մահացել է ծերանոցում: Արմեն Պողոսյանը բնակվում է կնոջ՝ Սիրամարգ Եգանյանի, եղբոր՝ Շահեն Պողոսյանի, երեք անչափահաս երեխաների և քրոջ՝ Ջոյա Պողոսյանի հետ համատեղ:

Ջոյա Պողոսյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու համար Ստեփանավանի խնամակալության և հոգաբարձության մարմին է դիմել երեխայի եղբայրը, Ստեփանավան համայնքի, Կաթնաղբյուր բնակավայրի 4 փողոց, 1 տան բնակիչ՝ Արմեն Պողոսյանը, որի հետ բնակվում է անչափահաս Ջոյա Պողոսյանը:

Հիմք ընդունելով Ստեփանավանի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 06.03.2020թ. եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 33, 34, 37, հոդվածներով, ՀՀ կառավարության 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման 9-րդ կետի պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ***որոշում եմ***

1. Անչափահաս Ջոյա Պողոսյանի (ծնված՝ 13.10.2008թ.ծննդ. վկայական ԱԱ N-278912) նկատմամբ խնամակալ նշանակել չափահաս գործունակ քաղաքացի՝ Արմեն Կոլյայի Պողոսյանին (անձնագիր՝ AS0662986, տրված 21.06.2019թ. , 053-ի կողմից):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հունիսի 2020 թվականի N **208**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԴՈՒՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 27 ՀԱՍՑԵՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 17.07.2018թ. թիվ 17072018-06-0012 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ ***որոշում եմ***

1. Ք. Ստեփանավան Դուրյան փողոց թիվ 27 հասցեով, Գևորգ Արտյուշայի Ղարաքեշիշյանին սեփականության իրավունքով պատկանող՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին և բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան Դուրյան փողոց թիվ 27/1:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հունիսի 2020 թվականի N **209**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 37 ՀԱՍՑԵՈՎ ԵՎ 06-007-0101-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ 0.002 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱԿՈԲ ՄԱՐՏԻՆԻ ԳՈԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 22.06.2020թ. N 22062020-06-0046 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, Ստեփանավան համայնքի ավագանու 23.12.2019թ. թիվ 101-Ն, 29.01.2018թ. թիվ 13-Ն որոշումը և Հակոբ Մարտինի Գոգորյանի կողմից ներկայացված դիմումը, ղեկավարվելով ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 16-րդ և 24-րդ կետերով, 43 հոդվածի 1 կետի 3-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշման 14[1] կետով և 46.2 կետի ա ենթակետով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով և 75-րդ հոդվածի 5 կետով ***որոշում եմ***

1. Ստեփանավան համայնքի սեփականությունը հանդիսացող, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող, Սուրբ Վարդան փողոց թիվ 37 հասցեի 0.002 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, 15 տարի ժամանակով, առևտրի և սպասարկման ոլորտի փակ տաղավար տեղադրելու նպատակով, կառուցապատման իրավունքով տրամադրել Հակոբ Մարտինի Գոգորյանին:
2. Կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասի վարձավճարի չափը սահմանել 1 քմ-ի համար տարեկան 1300 ՀՀ դրամ, ըստ որի 20 քմ հողամասի տարեկան վարձավճարը կազմում է 26000 ՀՀ դրամ:
3. Համայնքապետարանի և կառուցապատողի միջև սահմանված կարգով կնքել կառուցապատման իրավունքի պայմանագիր:
4. Պարտավորեցնել Հակոբ Մարտինի Գոգորյանին պայմանագրից ծագող իրավունքները գրանցել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հունիսի 2020 թվականի N **210**

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՁԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.26 ՀԱ ԱՐՈՏԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արման Թունյանի 08.06.2020թ թիվ Թ-107 դիմումը, Ստեփանավան համայնքի ավագանու 09.04.2020թ. թիվ 22-Ա որոշումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1477-Ն որոշմամբ ***որոշում եմ***

1. Ստեփանավան համայնքի վարչական սահմաններից 06-007-0167-0001 ծածկագրից 0.26 հա արոտը վարձակալության իրավունքով տրամադրել Արման Թունյանին՝ համաձայն կից տրվող հողամասի հատակագծի:
2. Արման Թունյանի հետ կնքել հողամասի վարձակալության իրավունքի պայմանագիր 3 տարի ժամկետով, տարեկան վարձավճարի չափ սահմանելով 1000 / հազար / ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հունիսի 2020 թվականի N **211**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 06-007-0146-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՐՓԻ ՄՈՒՇԵՂԻ ԱՄԲԱՐԴԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայարփի Մուշեղի Ամբարդանյանի կողմից ներկայացված դիմումը, 29.09.2017թ. թիվ Հ-530 արխիվային քաղվածքը, 03.10.2017թ. տրամադրված հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի քաղվածքը, 06.10.2017թ. տրամադրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ սեղանամատյան 2690, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ ***որոշում եմ***

1. Վերականգնել Ստեփանավան համայնքի ք.Ստեփանավան 06-007-0146-0013 ծածկագրում գտնվող 608.3 քմ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հողհատկացման հիմքերը՝

   ա/ Ստեփանավան քաղաքի 06-007-0146-0013 ծածկագրի հողամասի մակերեսը 608.3 քմ

   բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 608.3 քմ մակերեսով հողամասից 600 քմ օրինական հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Հայարփի Մուշեղի Ամբարդանյանին, իսկ մինչև 15.05.2001թ. զբաղեցրած և առ այսօր օգտագործվող առանց իրավունք հաստատող փաստաթղթերի 8.3 քմ մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք անհատույց սեփականության իրավունքով հատկացնել՝ Հայարփի Մուշեղի Ամբարդանյանին համաձայն «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծի: Վերը նշված անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, ք.Ստեփանավան 4-րդ միկրոշրջան, Ղարս փողոց թիվ 4 բնակելի տուն:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ